



Զապել Եսայան

Միլիտարի պարտեզները

Մեր փողոցը

Մեր տան փողոցը մեկ կողմէ կը բարձրանար դէպի Սելամսրգի քեօշէն եւ միւս կողմէ կ'իջներ դէպի յունական եւ հայկական թաղերը: Մեր տունը ճիշդ կեդրոնն էր եւ մեր տան հարեւանները արհեստաւորներու բարեկեցիկ հին ընտանիքներ էին: Փողոցէն դէպի Սելամսրգ բարձրացող մասին վրայ կային հին ամիրայական տուներ, որոնց այլասերած բնակիչները, իրենց լայնաձաւ Եւ փլփլած փայտաշէն տուներուն մէջ քաշուած, կ'ապրէին ժլատութեամբ, կրծոտելով իրենց նախկին փարթամութեան վերջին թափթփուքները: Անոնք, միմտիս, իրենց տեղերուն վրայ ծերացած ու պառուած մարդիկ էին, անգղի կտուցներով, խոժոռ եւ սրդողած նայուածքներով: Այդ հին ընտանիքներէն ոմանք, լքելով իրենց անբնակելի դարձած տուները, որոնք նորոգելու միջոցներ չունէին, ապաստանած էին իրենց նախկին ախոռներուն կամ սպասաւորներու յարկաբաժիններուն մէջ: Այդ ընտանիքներէն շատ քիչեր երիտասարդ սերունդ ունէին, ընդհանրապէս հանգած էին: Բայց այն հագուադէպ շառաւիղները, որ կային, դարձեր էին կառապան, ձիապան, դոնապան: Անոնցմէ մէկը իբրեւ դպրոցի ծառայ աշակերտները կ'առաջնորդէր թերերը ծանրաբեռնուած սակառներով:

Տուտուն մանրամասն գիտէր այդ ընտանիքներու պատմութիւնները եւ երբեմն կը յօժարէր խօսիլ անոնց մասին: Ինչ որ ինձ կը հրապուրէր մասնաւորապէս, այդ հին տուներու ընդարձակ պարտեզներն էին որոնց մասին հրաշալիքներ կը պատմէին: Այնտեղ կային տարաշխարհներէ բերուած ծառեր, որոնք անսովոր

Ծաղիկներ եւ պտուղներ կու տային: Այնտեղ կային իրարու յաջորդող դարատափերու վրայ աւազաններ, որոնց շատրուաններէն ջուրը կը սլանար բազմաթիւ ժայթքերով եւ յետոյ կը գահավիժէր մէկ աւազանէն միւսը: Նշանտուրներու եւ հարսնիքներու առիթով պարտէզները կը լուսավառուէին եւ հրթիռներ կը բարձրանային մինչեւ երկինք: Բեհեզով եւ վենետիկեան թափշով զգեստաւորուած՝ գեղեցիկ կիներ կը շրջագայէին թաւուտներու մէջ: Այժմ ամէն ինչ ցամքած, մարած եւ մեռած էր եւ այդ հեքիաթային պարտէզներու մէջ, որոնց բարձրաբերձ եւ փլփլած պարիսպները բորոտած էին մամուռով եւ քարաքոսով, մոլախտները կը խեղդէին ապասերած ծառերու բուները:

Տնեցիները, Տուտուի վերյիշումներէն ոգեւորուած, կը թուէին անցեալ շքեղութեան օրերը, մասնաւորապէս սուլթան Ազիզի գահակալութեան սկիզբը ու նաեւ եղերական դէպքեր, յանկարծահաս շնորհագրկութիւն, գլխատութիւն, արքայ եւ այլ պատմութիւններ: Այդ բոլորը լսելով Երանիկ մօրաքոյրս մատովը ցոյց կու տար, հեռու պարտէզի մը մէջ, սէզ կեցուածքով ուրուականային սիլուէթ մը եւ կ'ըսէր արհամարհանքով.

– Էշէն իշեր են, ջուշ-ջուշը չեն ձգեր բերաննուն...

Փողոցը վերի կողմէն կը վերջանար նոր հարստացած առետրականներու հանգստաւէտ տուներով: Անոնց բնակիչները ժիր էին: Այրերը ամէն առաւօտ կանուխ կ'երթային շուկայ եւ կիները, հագուած սքուած վերջին նորածեւութիւններու համեմատ, փոխադարձ այցելութիւններ կ'ընէին: Անոնք չունէին սեփական կառքեր, բայց կը վարձէին լաւագոյն երկձի կառքերը եւ Կիրակի ու տօն օրերը կ'երթային Չամլըճա: Սրարշաւ կ'անցնէին Թոփհանէ օղլուի հին ազնուապետական թաղէն, փոշիի ամպեր բարձրացնելով իրենց անցքին: Այդ առետրականները եւ վաճառականներն էին որ կ'ընտրուէին թաղական եւ առատ նուէրներով կ'արդարացնէին իրենց ընտրութիւնը: Ս. Խաչի եւ Ս. Կարապետի քարոզիչները այդ կարգի տուները կը հրաւիրուէին ճաշի եւ քծնող տաներէց քահանաները միշտ նշխարք ունէին տալու այդ առետրականներու երեխաներուն, ուր որ պատահէին անոնց: Ջրօսատեղիները, կազիմոնները, ամենուրեք, սպասեակները կը շտապէին ծառայելու այդ ընտանիքներուն, որոնք ամբողջ Սկիւտարը կը լեցնէին իրենց աղմկարար

գուարճութիւններով եւ շտեսի շքեղ արդուզարդով:

Անոնց տուներուն մէջ դաշնամուրը մուտք գործած էր արդէն եւ եւրոպական պարերը դարձեր էին ստիպողական: Անոնց աղջիկները կ'երթային Մեգպուրեան մասնատր վարժարանը եւ երբեմն ֆրանսացի քոյրերու դպրոցը եւ աւելի ուշ՝ Հոմսքուլ, ամերիկեան կոլէճը, իսկ մանչերը կ'երթային Պերպլերեան վարժարանը, որը աւարտելէ յետոյ կը մեկնէին Եւրոպա:

Այն ժամանակները ինձ մասնատրապէս կը հետաքրքրէր դիմացի նպարավաճառ-գինետունը, որ խորհրդատր եւ ինձ համար ընդմիշտ անժանօթ մնալու սահմանուած վայր մըն էր: Իմ գարմացած եւ հիացած աչքերս փակ վարագոյրներու արանքէն կը դիտէին այլազան աշխարհ մը, որ կը պարզուէր մեր տան դիմաց: Գինետունէն դուրս կը սպրդէին ձայներ, ուրախ կամ տխուր, հառաչանքներ եւ երգեր: Անկէ դուրս կ'ելլէր նաեւ տապակած ձուկի բարկ հոտը եւ զանազան խորովածներու ծխոտ բուրմունքը: Երբեմն գնչուհիներ կու գային կը պարէին գինետան առաջ եւ բախտ նայող կիներ զի ձայնով կը գոչէին. «Ֆալճի՛, ֆալ պագար, բախա աթա՛ր...»: Աճպարարներ, տէրվիշներ, կախարդներ կու գային, զանազան խաղեր կը սարքէին: Օր մը այնտեղ եկաւ ճերմակ մօրուսատր օձահմայ մը, որ մոզական գաւազանը շարժելով օձերը դուրս հանեց վիզէն կախուած պարկէ մը: Անոնք կը սողային օձահմային բազուկներուն վրայ, կը գալարուէին վիզին շուրջ, յետոյ, դարձեալ գաւազանին շարժումներուն անսալով, կ'իջնային գետին, կը բոլորուէին եւ գլուխնին ցցուած կը պարէին, մինչ օձահման իր սրինգը կը նուագէր: Գնչուներ կը բերէին նաեւ արջ, կապիկ, եւ խաղցնել կու տային, թմբուկի ռիթմով: Այդպիսի առիթներու ոչ միայն գինետան մարդիկը, այլեւ դրացիներն ու անցորդները կը խոնուէին փողոցը: Բոլոր պատուհաններէն դեռատի եւ տարեց կիներ մինչեւ կէս մէջքերնին կախուած կը դիտէին: Եւ չեմ գիտեր ուրկէ, դուրս կու գային երեխաներու երամներ, ոմանք գլխաբաց եւ ոտաբոպիկ, ոմանք լաւ հագուած, որ կը խուժէին բոլոր փողոցներէն եւ գոհներէն եւ կը խոնուէին գինետան առաջ:

Տեսեր եմ այնտեղ յունական ուրախ տօներ, ծաղկազարդ մարդերու թափօրներով, հեթանոսական տօներ, որոնցմէ մէկը որոշակի դրոշմուած է յիշողութեանս մէջ. մարդ մը կոնակը բեռցուցեր էր թարմ ոստերու եւ ճիւղերու

դալար դեզ մը եւ ետ ու առաջ օրօրուելով կ'երգէր ու յոյն պատանիներ եւ երիտասարդներ, ամէն մէկը բռնած սրսկիչ մը, ջուր կը սրսկէին այդ բոյսերու դեզին: Մայիս մէկին, բոլոր տուները, բայց մասնատրապէս յոյներու տուները կը զարդարուէին վարդերու եւ զանազան ծաղիկներու կիրլանդներով: Փրփրադէզ կաթը կը լեցուէր մեծ ընդունարաններու մէջ, որովհետեւ սովորոյթ էր այդ օրը առատութեամբ կաթ խմել: Տեսեր եմ շիա թուրքերու մռայլ տօները... արհինաշաղախ թափօրներ, դիւահարի դէմքով մարդիկ, որոնք իրենց կուրծքերուն զարնելով խոռոչային ձայնով կը գոչէին. «Եա՛ Հասան, եա՛ Հիւսէին...»: Կը յիշեմ ռամագանի գիշերները, երբ մինչեւ արեւածագի թնդանօթներու թնդինը, դառուլ գուռնան կը բաբախէր ետեւի թաղերուն մէջ եւ թուրք արբած երիտասարդներու նաղարան կ'երկարածգուէր աղէտի ազդարարութեան նման: Կը յիշեմ նաեւ Ղուրբան պայրամիի նախորդող օրերը, կնգուղատր հովիւներ, որոնք փողոցէն կը տանէին կապոյտ, կարմիր ժապաւեններով զանգուր գառները եւ որոնց կերկեր մայիւնը կը կորսուէր թուրք տղոց ժխորին մէջ:

Բայց մեր փողոցը կ'ոգետորուէր մասնատրապէս հայկական տօնական օրերուն: Բոլոր մեր արհեստատր դրացիները օրեր առաջ կը պատրաստուէին դիմատրելու այդ ծանր եւ հանդիսատր տօները: Աստուածածնին, ամառուայ լրումին, երբ առաջին անգամ չաուշ խաղողը կը լեցուէր սեղաններու վրայ եւ Վարդավառին՝ երբ ամենէն լուրջ դրացիները շէնշող կը դառնային եւ դոյլերով ջուր կը թափէին իրարու վրայ: Յետոյ կու գար Խաչի տօնը, աշնանամուտ, ու վարի թաղերէն ճոնչացող սայլերը կը մեկնէին դէպի Արմաշ: Վերադարձողները իրենց հետ կը բերէին յունապ, փշատ եւ զարմանագան պատմութիւններ:

Բայց մանաւանդ կը յիշեմ կաղանդի նախատօնակը, երբ յոյն եւ հայ տղոց խումբեր կ'անցնէին փողոցներէն եւ դռներուն զարնելով կ'երգէին թմբուկի ընկերակցութեամբ.

Այոս Վասիլիս էրքեթէ:

Շայ տաղաքը կը խափանէին յոյն տղոց ձայները եւ փոխադարձաբար.

Շայոց աշխարհին դռներ բացուեցան,

Լոյսն ի բաց գնաց, արեւ ծագեցաւ...

Մեր փողոցի վարի մասը միշտ լեցուն էր աղմկարար երեխաներով, կէս կուշտ, կէս անօթի բանուորներով եւ ձկնորսներով, որոնց կեանքը գարունէն մինչեւ ձմեռնամուտ կ'անցներ փողոցներու մէջ եւ գոնէ տան սեմերու վրայ: Երբ Երանիկ մօրաքրոջս հետ կ'իջնէի փողոցէն, բոլոր այդ միայարկ տուներու դռները բաց կ'ըլլային եւ սենեակներն իսկ իրենց բազմաթիւ պատուհաններով պատշգամներու պէս կը յայտնաբերէին բնակիչներու ներքին եւ մտերիմ կեանքը:

Յոյն թէ հայ այդ մարդիկը փողոցին մէջ կը լուծէին իրենց ընտանեկան վէճերը. փողոցին մէջ էր որ ամուսնութեան խոստումները կը տրուէին եւ դարձեալ փողոցին մէջ էր որ վիճաբանութեան կ'ենթարկուէին ընդհանուրին եղող գանազան հարցեր: Կազ եւ կոիւր, ինչպէս եւ ուրախութիւնը անպակաս էին այդ փողոցներուն մէջ: Աղմկարար եւ շատախօս յոյներու եւ հայիոյելու մէջ վիւրտիոզ հայերու ժխորին կու գային կը միանային փողոցի շուներու իրարանցումը եւ հաջոցները, ինչպէս նաեւ շրջիկ վաճառողներու երկարաձիգ աղաղակները եւ երգող կանչերը, որոնցմով իրենց ապրանքը կը գովէին: Մեր տնեցիները, բացի Երանիկ մօրաքոյրէս, չէին սիրեր իջնել այդ փողոցէն եւ այսպէս ըսելով իրենց երեսը կը դարձնէին դէպի Սելամսուրգ: Գիշերները մինչեւ ուշ ատեն աղմուկը եւ ժխորը չէին դադրեր այդ փողոցներուն մէջ եւ յոյներու սիրելի լաթերնան, մարդու մը կոնակը բեռցուած, յաճախ իր ցնծուն հնչիւնները կը պտտցնէր հեռու եւ մօտ փողոցներու մէջ: Ան յաճախ կանգ կ'առնէր մեր դիմացի գինետան առաջ: Գինովի խոպոտ ձայներ արձագանգ կու տային լաթերնայի լպրտուն երգերուն եւ երբեմն յունական ժողովրդական երգ մը կը տիրապետէր բոլոր ձայներուն եւ հնչիւններուն: Բայց երբեմն ալ պահապանը ողբագին ձայնով կ'ազդարարէր որ հրդեհ կայ քաղաքին մէջ: Շուները կը կաղկանձէին, հեռաւոր պահապաններու ձայները կ'երկարէին եւ ես գլուխս վերմակիս տակ կը պահէի, շնչասպառ, հոգիս լիքը անձկութիւնով եւ արհաւիրքով: